

Պատրաստական գրամք	50				
Ստանալիք ի Պետիգրասկուց	5.000				
Մեղրամոմք արժողութեամբ	85	22.285			
Բ-ՀԱ-ՀԵ-Հ (Հայ-ՀՀ-Հ) Ս. Աստուածամայր եկեղեցից պատրաստական գրամք	2683				
Մեղրամոմք արժողութեամբ	20	288	3		
ԵՒ-ԵՒ-Ե-Ե-Ե Ս. Աստուածամայր եկեղեցից գրամատոմնակք	9586	25			
Պատրաստական գրամք	1122	99			
Մեղրամոմք արժողութեամբ	405	12	11.114	36	
Թ-Դ-Դ-Դ-Դ (Դաշտավայր) Ս. Աստուածամայր եկեղեցից պատրաստի գրամք	366	68	366	68	
Վ-Լ-Վ-Վ-Վ-Վ (Վահագոյ) Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցից գրամք	1500				
Պատրաստական գրամք	1301	4			
Մեղրամոմք արժողութեամբ	474	95	3.275	99	
Ա-Դ-Դ-Դ-Դ (Դաշտավայր) Ս. Լուսաւորիչ եկեղեցից Մեղրամոմք արժողութեամբ	16		16		
Ա-Դ-Դ-Դ-Դ (Դաշտավայր) Ս. Աստուածամայր եկեղեցից պատրաստական գրամք	1329	76			
Մեղրամոմք արժողութեամբ	293	20			
Ստանալիք ի պարտապահաց	3988	33	5.611	29	
Գ-Ե-Ե-Ե-Ե (Եղանակ) Ս. Պետրոս և Պողոս եկեղեցից Պատրաստական գրամք	153	97	153	97	
Ղ-Շ-Հ-Հ-Հ (Հիւ-Հ) Ս. Աստուածամայր եկեղեցից յրամատոմնակք	400				
Պատրաստական գրամք	117	17	517	17	
	Գումար		319.789		6

Առնեն. Բոլոր եկեղեցիք Հայոց Աստրախանայ թեմի վասն 1879 ամի ունեն.					
-) Բանկային գրամատոմնակք	277.596	բուրլի	25	կոպէկ	
+) Առ ձեռն պատրաստի գրամք	17.694		60	կոպէկ	
+) Մեղրամոմք արժողութեամբ	6.034		84		
) Ստանալիք ի պարտապահաց	18.463		37		
	Գումարն		319.789		6

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ԹԻՖԼԻՍԻ Ս. ՄԱՐԻԱՄՄԵԱՆ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱԿԵՐ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՄՐԵ:

Դեռ մեզանից շատ հեռու չե այն ժամանակամիջոցը, երբ Թիֆլիսին իգական սեռի կրթութեան մասին երբեք չէր մտածում, երբ նորա մեծամասնութիւնը «օրիորդական ուսումնարան» խօսքերը լսելիս, ականջները փակելով ծիծաղումէր, Աչա այդպիսի մի դժուար ժամանակամիջոցում: Ստեփանոս (օյժմ Խորէն Արդղապետ) Ստեփանէն յղացաւ հիմնել Թիֆլիսում օրիորդական ուսումնարան: որը շատ նեղութիւններ կրելուց յետ կարսղացաւ չիմնել Թիֆլիսում առաջին անգամ: Ս. Մարիամմեան «օրիորդական ուսումնարանը 1868 թուին Վերջապէս նցյն թուին բալորովն հաստատաւեցաւ անզրանիկ Ս. Մարիամման օրիորդական ու-

սուռմարանը, որը օր աւուր յառաջ էր քայլում: իւր հիմնադրի եռանգոտ գործունէութեամբ: Այնուհետև հիմնվցան Թիֆլիսում՝ ուրիշ ուրիշ ուսումնարաններն եւս: Բայց ափսոն որ երկար շահեց այդ ուսումնարանի եռանգագին ու կանոնաւոր յառաջաղիմութիւնը: որովհետև հիմնադրի 1871 թ. թողնելով Թիֆլիսը, գնաց Սուրբ Էջմիածին սիրաբորբոք հոգւով կուսակրօն հոգեորականութիւն ընդունելու նպատակաւ: Եւ նոյնիսկ նորա հեռանալից, ուսումնարանը զրկուելով իւր հիմնադրի հոկողութիւնից, բոլորովին անբաղտացաւ նա: Այսինքն 1872 թից ենթարկվեց նա զանազան տեսուչների իրաւասութեան ներքոյ: որոնք իւրեանց կարճաժամանակնայ պաշտօնավարութեամբ: չկարողացան ուսումնարանը մի որոշ կարգ ու կանոնի տակ ձգել, ինչպէս որ առաջ էր հիմնադրի օրով: Եւ այդ պատճառաւ, մինչև ցայսօր այդ թշուառ ուսումնարանը, Թիֆլիսի հայ հասարակութեան սէրն ու համակրութիւնը չկարողացաւ փոքր ինչ գեսպի ինքն գրաւել: Ինչու—որովհետև ուսումնարանում իւրաքանչիւր աեսուչը, մի կամ տարի ու կես պաշտօն վարելուց յետ, որ հազիւ թէ կարող էր նա ծանօթանալ ուսումնարանի զրութեան հետ, այնինչ յանկարծ զանազան հանգամանքներից ստիպուած: թողել է ուսումնարանը և հեռացել: Խոկ նորան յաջորդել է երկրորդը, որը առաջնի արած կարգադրութեան հետ զեռ չծանօթացած, նոյնպէս թողել է տեսչական պաշտօնը: որին հետեւ է երրորդը, շորորը ևլու: Աչա այսպէսով, այդ թշուառ ուսումնարանը այն աննախանձելի զրութեան հասաւ: որ մօտ էր փակուիլը, և այդ ճգնաժամին (1877 թ.) հասաւ զարձեալ բաղադրեամբ նորա հիմնադրը: 2նայելով որ շատ քիչ ժամանակ տեսչութիւն արաւ, սակայն իւր եռանգոտ բնաւորութեամբ: ուսումնարանի ուսումնական մասը փոքր ինչ բարելաւելուց յետոյ: ուշք գարձեց և նիւթականի վերայ: Վերջնիս համար մի օր աշակերտուհիների ծնողներին հրաւիրեց ուսումնարան, ուր նորա խօսքերը մեծ տպաւորութիւն գործեցին ծնողների վերայ: այնպէս որ հետզհետէ աշակերտուհիների թիւը բաւական բարձրացաւ: նոյնպէս թոշակատու աշակերտուհիների ծնողները, իւրեանց բարի ցանկութեամբ: աւելացրին ուսման վարձը: Մի քանի ամիս այսպիսի կանոնաւոր կարգ ու ընթացք ուսումնարանի մէջ մոցնելից յետ, Բագուի «Մարդասիրական ընկերութեան» և ժողովրդոց հրաւերով գնաց այնտեղ: Այսպէս ուրեմն եօթ ութ տարի ուսումնարանը երրեք չունեցաւ մի քանի տարի շարունակ տեսչութիւն անող անձն, որից իմ կարձիքով կարելի էր մեծամեծ օգուտներ սպասել: 2նայելով որ այդ ուսումնարանը ունեցել է չորս անփոփոխ հոգաբարձուներ և այժմ ևս ունի սակայն նոցանից և ոչ մինը ըստ արժանույն կատարել է իւր պաշտօնը թէպէտեւ նոցանից մինը նշանաւոր է իւր մի անշարժ կալուածքի նուիրաբերութեամբ Զմուռանանք յիշելու և այն, որ այդ անբաղդ ուսումնարանում տեսչութիւն անող պարոններից ոմանք սրաւանց աշխատել են ուսումնարանին լաւ և կանոնաւոր ուղղութիւն տալու, բայց նոցա մինը միւսի ե-

տեից շուտ շուտ փոփոխութիւն կրկին առիթ է տուել նոցա աշխատութեան կիսակատար լինելուն, Այդպիսի կարգիցն է պ. Յովհաննէս Զիգիանեանը, որ արժանապատիւ Խորէն վարդապետ Ստեփանէի Քաղու զնալից յետ, տեսչութեան պաշտօն ստացաւ և սկսեց եռանդոտ կերպով կանոնաւորել ուսումնաբանի գրութիւնը, կազմելով ուսուցական ժողովներ, ուր մանկավարժութեան վերաբերեալ ամեն մի ծանր խնդիրը, ընդհանուրի հաւանութեամբ ու համաձայնութեամբ լուծվումէր և վճավում։ Բայց ափսո՞ս որ երկար չտեսեց սորա տեսչութիւնն ևս, իւր նախորդների պէս ըստ որում նոյն 1877 թւի վերջիրում բացուեցաւ Թիֆլիսում «Մարիամեան Յովնանեան» օրիորդական ուսումնաբանը, որի տեսչութեան պաշտօնը յանձնուեցաւ պ. Զիգիանեանին իսկ նորա տեղը յաջորդեց պ. Բարսեղ Կանդուրալեանը, որը շատ կարճ ժամանակ տեսչութեան պաշտօնը թողնելով, սկսեց իւր առանձին մասնադիտական գիւղատնտեսական գործերով պարապել։ Սորանից յետ իրու փորձ, տեսչութեան պաշտօնակատարի դերը ձրիապէս յանձն առաւ կատարելու մեծ օրիորդ Գայեանէ Յովհաննիսեանը, սա ևս մի քանի ամիս իւր պաշտօնը բաւական գոյացուցիչ կերպով կատարելից յետ, թողեց Թիֆլիսը և գնաց Քութայիս տեղական հայ հասարակութեան խնդրանաց համաձայն։ Սորանից յետոյ 1879 թւի սեպտեմբերից տեսչութիւնը յանձնուեցաւ ընթերցող հասարակութեան յայտնի պ. Յարոյին, որը տեսչութեան պաշտօնը ստանալու օրիցն նկատեց որ ուսումնաբանը շատ անմիջաբ զրութեան մէջ էւ Ուստի որքան կարելին էր, աշխատեց ուսումնաբանին մի այնպիսի ուղղութիւն տալ, որով կամենումէր հասարակութեան սէրն ու համակրութիւնը գրաւել դէպի ուսումնաբանը։ Սա որոշեց որ ճաշերից յետոյ չափահաս օրիորդները օրը մի ժամ՝ պարապեն եւրոպական նոր ձեի կանոնաւոր կար և ձեռվ, որից գոյացած արդիւնքից կար ու ձեի ուսուցչուն վարձ տալից յետ, մնացած արդիւնքը բաժանվումէր երկու մասն։ մի մասը յօգուտ ուսումնաբանին, իսկ միւս մասը յօգուտ չքաւոր և որը աշակերտուչիներին։

Պ. Յարոյի հրաւիրմամբ, պատուական տիկիններից Տ. Լիդա Թամամշեան և իւր ծանօթներից ոմանք ձրիապէս յանձն առան ուսումնաբանում դասեր տալու, երիտասարդներից մեծ, պ. Բարսեղ Կանդուրալեան, մեծ, պ. Քեչըռութեան և մի քանի երիտասարդներ։ Վերջիշեալ մեծ տիկինների և պարոնների մասնակցութեամբ պիտի կազմվէր մի աշխատող խումբ (ինչպէս որ Գայեանէինն է), որի եռանդագին աշխատանքով անշուշտ պիտի վերականգնէին նորան ներկայ թշուառ զրութիւնից։ Բայց ափսո՞ս որ մշտնջենական հոգաբարձուներից մինը, երբ իմացաւ այս շարժումը, երկիւղ կը-րելով որ մի գուցէ հոգաբարձուկան լիազօր իրաւունքից զրկուի, անմիջապէս խորհուրդ է կազմում միւս հոգաբարձուների հետ պ. Յարոյին պաշտօնից հրաժարեցնելու համար։ Եւ այս զիտաւորութիւնը յաջողացնումէ ներկայ թւի յունվարին։ Թուաբանութեան ուսուցիչը երբ պարապե-

լիս է լինում թ. պատրաստական դասառան աշակերտուհիների չետ, յանկարծ մանումէ նոյն հոգաբարձուն դասառան և ուսուցչի դասախոսութիւնը ընդհատելով հարցումէ աշակերտուհիներից մինին մի մանկավարժութեան մէջ անընդունելի խողիր 200,000 զրելու մասին, որը օրիորդը չէ կարողանում լուծել, եւ այսպիսի պատճառներով ուսումնարանից չեսացնումէ թէ տեսչին և թէ բոլոր ուսուցիչներին. Ազիւ ընթերցող, մի՞թէ չես զարմանում Թիֆլիսիների վերայ, որոնք միշտ մատնանիշ են եղել գաւառական Հայի թեթև պակասութիւնների վերայ, իսկ իւրեանց մէջ այս և այսպիսի հասարակական կրթարանների և այլ հիմնարկութիւնների թերութեանց վերայ սառն աչքով են նայել միշտ և այդ պատճառաւ գաւառական Հայը աւելի խոհեմ է ազգային գործերի մէջ, քան Թիֆլիսին. ցաւալի՝ իրողութիւն

Հետեւալ նամակումն կխօսեմ սորա երկրորդ մասի վերայ, որ է Հաւաբարու Ս. «Մարիամեան» օրիորդական միակ ուսումնարանը նոյն թաղի, որ հիմնած է նոյնպէս Հ. Ստեփանեն 1869 թուին.

Ը. Խընդեան:

Թէ չկա:

ԴՈՒՔ ԶԷՔ ԿԱՐՈՂ.

Մի խօսէք ինձ բազզի մասին,

Ինձ թանկ է իմ ծանրակիր խաչ.

Դատարկ, անմիտ, սառն ամբոխին

Ես չեմ սեղմի ինձ մեկնած աջ:

Ճշմարտութիւն, սէր — զիտեմ ես —

Արդէն վաղուց այս աշխարհում

Հալածվումն միշտ դառնապէս,

Ես անարդար վճիռ կապվում:

Թող ինձ սպառնան հալածանքներ,

Ֆանք զբկանք, կարիք անել, —

Ես ունիմ այն քաղցրութիւններ,

Դուք չէք կարօղ երբէք ունել.

Ազատ հոգումն գորովումնեմ

Չեզ անծանօթ միտք և փափագ,

Եւ իմ վիճակ փոխելու չեմ

Խեղձ կեանքիդ չետ աննպատակ,

Իշխան Բագրատոսանէ.